ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵԻ ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ



# DUPNIMAS


ISSUE 97 AUGUST / ԹԻԻ 97 ՕԳՈՍՏՈՍ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

# Թեմական Լուրեր

Երկուշաբթի 4 Օգոստոս 2025-ի երեկոյեան, Առաջնորդարանին մէջ, Գերաշնորի Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի Սիտնիի մասնա-ձիւղի հերթական ժողովին։

Տեղի ունեցան արդիւնաւէտ քննար-







Չորեքշաբթի 6 Օգոստոսի երեկոյեան Սրբազան հայրը ընդունեց ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի Հոգաբարձութեան կազմը, գլխաւորութեամբ ատենապետուհի Տիկին Սօսի Կիրակոսեանի, ընկերակցութեամբ Ալեքսանտըր Վարժարանի Տնօրէն Պրն Մանուկ Տէմիրձեանի։
Հանդիպման ընթացքին, Սրբազան Հայրն ու հիւրերը
անդրադարձան Ալեքսանտր Վարժարանի մէջ Հայեցի
կրթութեան ի նպաստ տարուող ջանքերուն եւ ապագայի
ծրագիրներուն։ Սրբազան հայրը իր ամբողջական
զօրակցութիւնը յայտնեց Ալեքսանտր Վարժարանին
ինչպէս նաեւ Հայկական բոլոր վարժարաններուն, որոնք
մարդակերտման եւ հայակերտման օրրաններն են։

Հինգշաբթի 7 Օգոստոսի կէսօրէ ետք, Գերշ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան հայրը, Առաջնորդարանին մէջ, ընդունեց Ուիլուպիի Քաղաքապետուհի Տիկին Թանիա Թէյլըրը, որ այցելած էր Բարի գալուստ մաղթելու Սրբազան հօր եւ շնորհաւորելու անոր նոր պաշտօնը, որպէս Առաջնորդ Աւըստրալիոյ եւ Նոր Ջելանտայի Հայոց Թեմին։



Մրբազան հօր կ'ընկերակցէին Ս. Ցարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը, ինչպէս նաեւ Թեմական, Ծիական, Կալուածոց Յանձնախումբի եւ Բարեկեցութեան Կեդրոնի ներկայացուցիչները։

Հանդիպման ընթացքին, Սրբազան Հայրն ու հիւրերը անդրադարձան քաղաքապետարան - Առաջնորդարան սիրալիր եւ զարգացող յարաբերութեանց, ինչպէս նաեւ 31 Օգոստոսի Չացուուտի մէջ կայանալիք «Հայաստանի Օր» Փառատօնին։

Մրբազան հայրը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց քաղաքապետուհիին իր այցին եւ Ուիլուպի քաղաքի Հայ համայնքին հետ շարունակուող սիրալիր յարաբերու-

թեանց համար եւ մաղթեց որ անոնք մշտական ամ արձանագրեն յօգուտ քաղաքապետարանին եւ Հայ համայնքին։

Ուրբաթ 8 Օգոստոս – Ընկերակցութեամբ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ Christian Alliance Council of NSW – ի մեկնարկի արարողութեան, որ տեղի ունեցաւ նահանգային Խորհրդարանին մէջ, նախաձեռնութեամբ Նահանգապետ Քրիս Մինսի։

Աւելի քան 80 համայնքապետեր, քաղաքական, համայնքային եւ կրթական պատասխանատու անձինք մասնակցեցան այս հաւաքին, քրիստոնէական համերաշխ եւ սիրոյ մթնոլորտի մէջ։ Վերջին տասնամեակին քրիստոնեայ շունչը պետական մակարդակով սկսած էր մարիլ Միտնիի մէջ։ Պետական մաշտապով նման նախաձեռնութիւն մը յոյս կը ներշնչէ մեզի՝ Քրիստոնեաներուս որ Աւստրալիան կրնայ հետզհետէ վերագտնել իր Քրիստոնեայ դիմագիծը։

Բազմամշակոյթի, Զօսաշըրջիկութեան, Մարմնամարզի եւ Կալուածներու Նախարար Սթիւ Քամփըրի բացման խօսքէն ետք, խօսք առին երկու գլխաւոր յարանուանութեանց

ղեկավարներ յանձինս Րաֆֆէլ Քանիշքա Արքեպիսկոպոսին (Անկլիքան Եկեղեցի), Անթընի Րանտացօ Եպիսկոպոսին (Կաթոլիկ Եկեղեցի)։ Խօսք առին նորաստեղծ կազմակերպութեան ներկայացուցիչ Անտրու Հարփըր Վարդապետը, Նահանգապետ Քրիս Մինս, Աւստրալիոյ նախկին վարչապետ Թոնի Ապօթ, եւ նահանգային ընդդիմութեան ներկայացուցիչ Մարք Սփիքման։ Յայտագիրը փակուեցաւ Տէրունական աղօթքով եւ փակման խօսքով։

Միջոցառումը Սրբազան հօր եւ Տէր հօր համար առիթ հանդիսացաւ ծանօթանալու տարբեր գործընկերներու, որոնց հետ հետագային պիտի ծաւալի էքիւմէնիք գործունէութիւն։

Ձեռնարկին մամլոյ հաղորդագրութիւնը կարդալ Անգլերէն բաժինին մէջ։

Ուրբաթ 8 Օգոստոս – Սրբազան հայրը, ընդառաջելով Համազգայինի Հայկական Ֆիլմերու Փառատօնի կազմակերպիչ յանձնախումբի հրաւէրին, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, ներկայ գտնուեցաւ Հայ Ֆիլմի 9րդ Փառատօնի բացման հանդիսութեան։ Կալա գիշերուան ցուցադրուած ֆիլմն էր Monsieur Aznavour։ Սիտնիի մէջ փառատօնը տեղի ունեցաւ 8-17 Օգոստոս, իսկ Մելպուրնի մէջ՝ 29-31 Օգոստոս։

Փառատօնին ցուցադրուեցան հայկական 14 ֆիլմեր հազարաւոր հայ եւ ոչ հայ հանդիսատեսներու ներկայութեան։ Որակաւոր եւ տպաւորիչ այս ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնը Համազգայինի Շանթ Մասնաձիւղին, տնօրինութեամբ Տիկնայք Մակի Չէյթըրի եւ Հուրի Տէմիրձեանի։ Հայ համայնքին կողմէ արդէն ան դարձած է սպասուած ձեռնարկ։





Շաբաթ, 9 Օգոստոս - Առաջնորդարանի Սուրբ Գիրքի սերտողութեան խումբի նորաստեղծ վարչութիւնը իր առաջին ժողովը գումարեց Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. S. Վարդան Եպս. Նաւասարդեանի նախագահութեամբ, որուն ընթացքին քննարկուեցան կազմակերպչական նոր ծրագրեր։ Սրբազան հայրը նաեւ տեսակցեցաւ հոգեւոր դաստիարակուկամաւորապէս երկու հայկական ամենօրեայ վարժարաններու մէջ դասաւանդող ուսուցչուհիներուն հետ։

**Շաբաթ 9 Օգոստոս**ի կէսօրէ ետք Գերաշնորհ Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդարանին մէջ ընդունեց Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Մարոնի Համայնքի

Առաջնորդ Անթուան Շարպէլ Թարապայ Եպիսկոպոսը, որ ընկերակից հոգևորականներու հետ այցելեց բարի գալուստ մաղթելու Սրբազան Հօր եւ շնորհաւորելու զինք իր Առաջնորդի պաշտօնին համար։ Սրբազանին ընկերակցեցան Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան, Թեմական Խորհուրդի ատենադպիր Պրն. Գէորգ Չափրազեան։ Միրալիր ընթացքին, Սրբազան հանդիպման Հայրն ու Թարապայ Եպիսկոպոսը անդրադարձան երկու եկեղեցիներու յարաբերութեանց, եղբայրական Աւստրալասիական Մերձ-Արեւելեան Եկեղեցիներու միասնական աշխատանքներուն, ինչպէս նաեւ Միջին



տանքներուն, ինչպէս նաեւ Միջին Արեւելքն ու Հարաւային Կովկասը յուզող հարցերով։ Հիւրասիրութիւնը կազմակերպուեցաւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի կողմէ։

**Կիրակի, 10 Օգոստոս** – Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պաատարագի, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդարանին մէջ ընդունեց Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Կիրակ-



նօրեայ Դպրոցի աշակերտները, գլխաւորութեամբ դպրոցի տնօրէնուհի Երէցկին Ցասմիկ Համբարձումեանի։ Անոնք կ'այցելէին բարի գալուստ մաղթելու Սրբազան հօր որպէս Թեմիս Առաջնորդ։ Սրբազան հօր կ'ընկերակցէին Արժանապատիւ Տէր Աւետիս Համբարձումեան եւ Տէր Աշոտ Աբրահամեան Քահանայհայրերը, ինչպէս նաեւ Ծիական Խորհուրդի պատւոյ Ատենապետ Պրն Պետրոս Ձօրլու եւ ատենապետ Պրն Արա Գոփուշեան։

Մրբազան հայրը ողջունեց մեր եկեղեցւոյ ապագայ ղեկավարները եւ իր շնորհակալութիւնը յայտնեց այս այցին համար, օրհնելով զանոնք։ Աշակերտները արտասանութիւններով եւ երգերով

խանդավառեցին մթնոլորտը։ Ապա աւագ դասարանի աշակերտ Յարութ Քասիս ընթերցեց հետեւեալ ուղերձը.

Աստուած օգնական Միրելի Սրբազան Հայր։

Մենք՝ Միտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի սաներս, կ'ողջունենք ձեզ և բարի վերադարձ կ'ըսենք Աւստրալահայ հիւրընկալ համայնք։ Այսօր յատկանշական օր է, լեցուած ուրախութեամբ և բերկրանքով, քանի որ պատիւ ունինք հիւրընկալելու Ձերդ Մրբազնութիւնն այստեղ, ուր կը շարունակենք կրթուիլ, այլևս՝ Ձեր հոգածութեան ներքոյ։ Այս դպրոցը վայր մըն է, ուր մեր սիրելի ուսուցիչներուն շնորհիւ կը ձգտինք սորվիլ ոչ միայն հայ եկեղեցւոյ և հայ կրօնի մասին, այլև հաւատքի, կարեկցանքի և ծառայութեան արժէքներով դաստիարակուիլ և զանոնք կիրառել մեր առօրեայ կյանքին մէջ։ Մենք ուժեղ ենք Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ հետ մեր ամուր կապով, որը կը պարտինք Հոգևոր Հովիւին, բոլոր Քահանայ Հայրերուն և Վարչական կազմին և կը հաւատանք, որ ձեր ներկայութիւնն այսօր այստեղ ալ աւելի կ'ոգեշնչէ մեզ բոլորս առաւել եռանդով սորվելու Աստուծոյ խօսքն ու գործը։ Ձեր այցը հիանալի հնարաւորութիւն է մեզի համար, սորվելու Ձեր իմաստութիւնէն և առաջնորդութենէն և լիայոյս ենք, որ շուտով դպրոցի շարքերը կ'աւելնան նոր աշակերտներով։

Բարի գալուստ և թող որ Ձեր ծառայութիւնը մխիթարութիւն բերէ դժուար վի-Ճակի մէջ գտնուողներուն, յոյս՝ յուսահատներուն և հաւատք՝ մոլորեալներուն։

Գշ, 12 Օգոստոսի երեկոյեան – Համազգային Գօլստըն Ճեմարանի խնամակալ մարմնի անդամները այցելեցին Սրբազան Հօր5 գլխաւորութեամբ ատենապետ Պրն. Հրաչ Պօղոսեանի եւ ընկերակցութեամբ Ճեմարանի Տնօրէն Պրն. Էտի Տէսիրձեանի։ Հիւրերը եկած էին ողջունելու Սրբազան Հայրը եւ խորհրդակցելու Ճեմարանի մէջ հոգեւոր դաստիարակութեան ծրագրի մասին։





Մրբազան Հայրը ողջունեց հիւրերը եւ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Գօլստըն Ճեմարանին եւ հոգեւոր դաստիարակութեան ծրագիրներուն։ Մրբազան Հօր կ'ընկերակցէր Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան։

Չորեքշաբթի 13 Օգոստոս - Ուիլուպի քաղաքի Նիւ Մաութ Ուէյլզի Խորհրդարանի ներկայացուցիչ Պրն Թիմ Ճէյմս այցելեց Առաջնորդարան, բարի գալուստ մաղթելու Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին եւ շնորհաւորելու անոր Առաջնորդի նոր պաշտօնը։ Սրբազան հայրը, Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Թեմական Խորհուրդի ատենադպիր Պրն Գէորգ Չափրազեանի եւ Կալուածոց Վարչութեան անդամ Պրն Սարգիս Մուրատեանի հետ ընդունեց յարգարժան հիւրը։

Մրբազան հայրը ողջունեց Հայ համայնքին եւ եկեղեցւոյ միշտ զօրավիգ կանգնած Պարոն Ճէյմսը։ Իր կարգին, յարգարժան հիւրը վերահաստատեց իր զօրակցութիւնն ու աջակցութիւնը Աւստրալահայ համայնքին ընդհանրապէս իսկ Ուիլուպի բնակող Հայութեան եւ Առաջնորդարանին՝ մասնաւորապէս։

**Հինգշաբթի 14 Օգոստոս** – Համազգային Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անդամներ պաշտօնական այցելութիւն տուին Առաջնորդարան, գլխաւորութեամբ ատենապետ Պրն Գէորգ Վարդանեանի, բարի գալուստ մաղթելու Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին եւ շնորհաւորելու անոր Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին Առաջնորդի նոր պաշտօնը։ Շրջանային Վարչութեան կ'ընկերակցէր նաեւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Պրն Վիգէն Գալլօղլեան։ Անոնք հիւրընկալուեցան Սրբազան հօր եւ Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեանի եւ Թեմական Խորհուրդի անդամ Պրն Իվան Օհաննէսեանի կողմէ։



Վարդան Սրբազան ողջունեց հիւրերը, տեղեկացաւ Համազգայինի տարած կրթական եւ մշակութային գործունէութեան եւ իր զօրակցութիւնը եւ աջակցութիւնը յայտնեց Համազգայինի հայանպաստ կրթադաստիարակչական եւ մշակութային ծրագիրներուն։ Իրենց կարգին, յարգարժան հիւրերը բարձր գնահատեցին Համազգային-Առաջնորդարան ստեղծուած սիրալիր փոխ-գործակցութիւնը եւ վերահաստատեցին իրենց զօրակցութիւնն ու աջակցութիւնը Առաջնորդարանին եւ Սրբազան հօր։

Հիւրասիրութիւնը կատարեցին Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի անդամուհիները։

#### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԸ ՄԵԼՊՈՒՐՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ




Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, Օգոստոս 2025-ին, իր անդրանիկ այցը կատարեց Մելպուրնի Հայ գաղութին, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի անդամներ Տիարք Գէորգ Չափրազեանի եւ Իվան Oհաննէսեանի։ Թեմական Խորհուրդի երրորդ անդամը՝ Մելպուրնաբանկ Օրդ Րոպերթա Հոսիկեան միացաւ պատւիրակութեան։ Հիւրերը օդակայանին մէջ դիմաւորուեցան Ս. Աստուածածին Եկեղեցւոլ հոգեւոր հովիւ Արժ. Տէր

Խաչեր Քահանայ Յարութիւնեանի, Թեմի Կալուածոց մարմնի ներկայացուցիչներուն եւ Ծխական խորհուրդի անդամներու կողմէ, որոնք ուղղուեցան Սուրբ Աստուածածին Եկեղեցի, ուր Առաջնորդ Սրբազանը Հրաշափառով մուտք գործեց։ Արարողութեան աւարտին տեղի ունեցաւ աջամբոյր, ապա եկեղեցւոյ կից սրահին մէջ Մելպուրնի Հայ համայնքի կազմակերպութեանց ներկայացուցիչները հանդիպեցան Առաջնորդին։

16 Օգոստոս, 2025-ին Սրբազան Հօր պատուիրակութիւնը այցելեց Համազգային Մեսրոպ Մաշտոց-Մաթեւոսեան Վարժարան և Հայ կեդրոն, ուր տեսակցեցաւ տնօրէնութեան, ուսուցչական կազմին, աշակերտութեան և ազգայիններուն հետ։

Նախօրօք Ճշդուած ժամադրութեամբ, Մրբազան Հայրը, ուղեկցութեամբ Տէր հօր եւ Թեմական և Ծխական Խոր հուրդներու անդամներուն, այցելեց Մելպուրնի եւ Նոր Զելանտայի Ղպտի Առաջնորդ Րուիս Եպիսկոպոսին։ Մրբազանը առիթ ունեցաւ հանդիպե լու և խօսելու Ղպտի Աստուածաբա նական համալսարանական ուսանող ներուն։



Կէսօրէ ետք, Սրբազան հայրը այցելեց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործող Ակինեան Վարժարան, ուր հանդիպում ունեցաւ հոգաբարձութեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն հետ։

Երեկոյեան, Սրբազան հայրը եւ Թեմական Խորհուրդի անդամները խորհրդակցական հանդիպում մը ունեցան հոգեւոր հովիւին եւ Ծխական Խորհուրդի անդամներուն հետ, որմէ ետք Եկեղեցւոյ սրահին մէջ հոծ բազմութեամբ տեղի ունեցաւ մեծ տօնախմբութիւն և Ճոխ հիւրասիրութիւն։





**Կիրակի, 17 Օգոստոս** – Տօնական օր էր Մ Աստուածածին եկեղեցւոյ համար։ Բազմահարիւր հայորդիներ եկած էին եկեղեցի աղօթելու Սրբազան հօր հետ, հանդիպելու անոր եւ առնելու անոր օրհնութիւնը։ Սրբազան հայրը պատարագեց եւ քարոզեց։ Յաւարտ Պատարագի, Սրբազանը նաեւ հանդիպեցաւ Զուարթնոց Երգչախումբի եւ դպրաց դասի անդամներուն։ Ան առիթ ստեղծեց հանդիպելու Երիտասարդաց Միութեան վարչական անդամներուն, Սուրբ Գրոց սերտողութեան մասնակիցներուն, Ընկերային Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալութեան եւ տնօրէնին, Տիկնանց Միութեան վարչութեան անդամներուն եւ «Ազատ



շ ։ Ղարիպեան» պարախումբի պատասխնատուին։



Իր քարոզին մէջ Սրբազան հայրը շնորհաւորեց Սուրբ Աստուածածնայ տօնը, որը այս եկեղեցւոյ տօնն է։ Սրբազանը իր երջանկութիւնը յայտնեց որ Մելպուրնի մէջ, որպէս Առաջնորդ, իր անդրանիկ պատարագը Աստուածածնայ Վերափոխման օրը կը մատուցէր։ Սրբազանը բացատրեց Աստուածածնայ վերափոխման խորհուրդը, ընդգծեց Աստուածամօր առաքինութիւնը, անոր մեծ ներդրումը մեզ Աստուծոյ վերադարձնելուն մէջ։ Ան մաղթեց որ մեր կեանքը վերափոխուի եւ ընթանայ դէպի մաքուրն ու արդարը եւ համայնքի միասնական կեանքը այնքան զօրանայ որ կարենայ ուժ ու նեցուկ հանդիսանալ մեր Հայրենիքին։

Սրբազան հօր Մելպուրն այցելութեան երրորդ օրն էր Կիրակին։ Ան իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց հոգեւոր հովիւին, ծխական խորհուրդին, խորանին սպասաւորողներուն, երգչախումբին եւ երգեհոնահարին, սարկաւագաց եւ դպրաց դասերուն, ինչպէս նաեւ բոլոր հաւատացեալներուն, որոնք իրեն ընկերակից թէ աղօթակից եղան։ Նաեւ՝ Թեմական խորհուրդի եւ Կալուածոց Յանձնախումբի անդամներուն որոնք իրեն ընկերացան եւ զօրակից դարձան իր այցի ընթացքին։

Մրբազան հայրը զօրաւոր պատգամ տուաւ միասնութեան եւ միասնական ջանքերով զօրացնելու մեր դպրոցներն ու եկեղեցիները, որոնք կարեւոր ազդակներ են վերափոխելու եւ զօրացնելու մեր կեանքը։ Իր կարգին, Տէր Խաչեր քահանայ հայրը իր եւ բոլոր հաւատացեալներուն անունով երախտագիտութեան եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Մրբազան հօր եւ իրեն ընկերացող թեմական խորհուրդի անդամներուն։

Ապա տեղի ունեցաւ խաղողօրհնէք եւ զգեստներու եւ անոնց նուիրատուներուն օրհնութիւն։ Պատրագը աւարտեցաւ միասնական Տէրունական Աղօթքով։

**Երկուշաբթիւ 18 Օգոստոսին**, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեանի, Թեմականներ Տիարք Գէորգ Չափրազեանի եւ Իվան Օհաննէսեանի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ եւ Փոխատենապետ Տիարք Զարեհ Աւագեանի եւ Յովիկ Շահինեանի, այցելեց Քարտինալ Պիչոքի Ուքրանական Եկեղեցւոյ Առաջնորդա-Կաթոլիկ րանին մէջ։ Հանդիպման ներկայ եղաւ նաեւ Հայր Մայմընը։ Եղբայրական



սիրալիր խօսակցութենէ ետք, Մրբազան Հայրը Քարտինալ Պիչոքը հրաւիրեց այցելել Միտնիի Առաջնորդարան, որ սիրով ընդունուեցաւ եւ հաւանական է որ տեղի ունենայ Նոյեմբեր 2025-ի ընթացքին։ Ապա խումբը ուղղուեցաւ Մուրբ Պետրոս եւ Պօղոս տաձար, ուր տեղի ունեցաւ միասնական աղօթք։



Նոյն օրը, կէսօրէ ետք, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեանի, Թեմականներ Տիարք Գէորգ Չափրազեանի եւ Իվան Օհաննէսեանի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ եւ Փոխատենապետ Տիարք Զարեհ Աւագեանի եւ Յովիկ Շահինեանի, այցելեց Մելպուրնի Անկլիքան Թեմի փոխ-Առաջնորդին՝ Ժէնիէվ Պլաքուէլ Եպիսկոպոսին։ Հանդիպման ներկայ եղաւ նաեւ Պրատ Պիլլինկս Եպիսկոպոսը։

Երկու եպիսկոպոսները անդրադարձան երկու եկեղեցիներու սիրալիր եւ եղբայ-

րական յարաբերութեանց, նաեւ գաղափարներ փոխանակեցին զանոնք ամրապնդելու եւ զարգացնելու մասին։ **Երկուշաբթի 18 Օգոստոս**ի երեկոյեան, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ. Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեանի, Թեմականներ Տիարք Գէորգ Չափրազեանի եւ Իվան Օհաննէսեանի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ եւ Փոխատենապետ Տիարք Զարեհ Աւագեանի եւ Յովիկ Շահինեանի, այցելեց ՀԲԸՄ-ի Մելպուրնի Մասնաձիւղի կեդրոն, ուր հիւրընկալուեցաւ ՀԲԸՄ Մելպուրնի Վարչութեան Ատենապէտուհիին և ՀԲԸՄ-ի ընտանիքին կողմէ։



Առաջնորդ Սրբազան հայրն ու իրեն ընկերացող պատուիրակութիւնը այցելեցին նաեւ Սահակեան Մարզական Միութեան կեդրոն, ուր զիրենք դիմաւորեցին Միութեան պատասխանատու վարչականները և բազմաթիւ հայորդիներ։ Հիւրասիրութեան սեղանին շուրջ՝ Սրբազան Հայրը պատասխանեց ներկաներու հարցերուն և լսեց անոնց առաջարկութիւնները։

21 Հինգշաբթի Oqnumnuhu, ընկերակցութեամբ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնական այցելութիւն տուաւ Միտնիի Անկլիքան Արքեպիսկոպոս Րաֆֆէլ Քանիշքային, Սիտնիի Անկլիքան Առաջնորդարանին մէջ։ Քանիշքա Արքեպիսկոպոս սիրալիր ընդունեց հիւրերը։

Երկու համայնքապետերը քննարկեցին մարտահրաւէրներ, որոնց դէմ յանդիման կանգնած է եկեղեցին, ինչպէս նաեւ երկու եկեղեցիներուն տարած էքիւմէնիք գործունէութիւնը։

Եղբայրական հանդիպումին Արքեպիսկոպոսն ու

Սրբազան Հայրը որոշեցին շարունակել զարգացնել լաւ յարաբերութիւն-

ները Հայաստանեայց Առաքելական եւ Անկլիքան եկեղեցիներուն միջեւ։

**Շաբաթ 23 Օգոստոսին –** Ընկերակցութեամբ Արժանապատիւ Քահանայ Հայրեր Տէր Աւետիս Համբարձումեանի եւ Տէր Աշոտ Աբրահամեանի, Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Համազգային Նայիրի Պարախումբի փառահեղ ելոյթին որուն նիւթն էր Եօթ Քոյրերուն Հէքեաթը։

Սոյն ելոյթով Նայիրի Պարախումբը ներկայացուց Հայկական աւանդոյթներ, ուր հանդիսատեսին կը բացատրուէին Նաւասարդեան Փառատօնի ծնունդը, եւ տարբեր այլ աւանդութիւններ։

Պարուսոյց Անգինէ Կարապետեան եւ ներկայացման գրութիւնը (Սքրիփթ) պատրաստող Արմինէ Անտան կարողացած էին լաւագոյնս համադրել խօսքը, նուագն ու պարը, արժանանալով հանդիսատեսի բարձր գնահատանքին։

Հանդիսութեան աւարտին խօսք առաւ Սրբազանն Հայրը որ դրուատանքի խօսքերով բարձր գնահատեց Նայիրի Պարախումբի այս բացառիկ ելոյթը։



Կիրակի 24 Օգոստոս – Սուրբ Յարութիւն Եկեղեցին լեցուած էր երիտասարդներով։ ՀՄԸՄ Աւստրալիոյ մարզիկները, որոնք մասնակցելէ ետք Հայաստանի մէջ տեղի ունեցած 12րդ Համա ՀՄԸՄական խաղերուն եւ Լոս Անձելըսի մէջ ՀՄԸՄի միջ-ցամաքամասային առաջին սկաուտական բանակումին, վերադարձած էին իրենց տուները։ ՀՄԸՄի Շրջանային Վարչութիւնը բարի վերադարձի միջոցառում կազմակերպած էր ի պատիւ այս մարզիկներուն, որուն առաջին բաժինը մասնակցութիւն էր Սուրբ եւ Անմահ Պատարագի եւ հաղորդուիլ, իսկ երկրորդ մասը՝ հիւրասիրութիւն Էտկարեան սրահին մէջ։ Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան առաջարկով, հիւրասիրութիւնը կազմակերպուած էր իրենց կողմէ, որով կը դրսեւորուէր մայրական սէր ու գուրգուրանք հանդէպ Հայ արիներուն եւ արենուշներուն։

Վաթսունէ աւելի մարզիկ-մարզիկուհիներ հաղորդուեցան, ապա Վարդան Առաջնորդ Սրբազան հօր եւ Տէր Աւետիս Քահանայի հետ միասին թեմական, ծխական խորհուրդներու անդամներու եւ ՀՄԸՄի պատասխանատուներու հետ փոխադրուեցան Էտկարեան սրահ։ Շնորհակալութեան խօսք յայտնեց Շրջանային Վարչութեան ատենապետուհի Քոյր Ցոլին Քէշիշեան։



Խօսք առաւ նաեւ ՀՄԸՄի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբայր Տիրան Վահրատեան։

Ան տեղեկացուց որ 26 Յուլիսէն 2 Օգոստոս Հայաստանի մէջ տեղի ունեցած ՀամաՀՄԸՄական խաղերուն մասնակցած են 750 մարզիկներ, 17 շրջաններէ իսկ Աւստրալիոյ շրջանը իր մասնակցութիւնը բերած է 120 մարզիկներով, մարզիչներով եւ պատասխանատուներով։ Ան յատուկ շնորհաւորանքի խօսք ուղղեց ՀՄԸՄի Աւստրալիոյ շրջանային վարչութեան կազմին, որ որեւէ ձիգ չէր խնայած մեծաթիւ ներկայութիւն ապահովելու խաղերուն։

Ան պատգամեց ըսելով. «Սիրելի մարզիկներ, ձեր պարտականութիւնն է այդ խաղերէն ստեղծուած ոգին ու անմոռանալի յիշատակները փոխանցել գաղութի յաջորդ սերունդներուն, ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով ձեր սրտերուն մէջ»։

Մրբազան հայրը, որ եկեղեցւոյ մէջ ողջունած էր մարզիկները, խօսք ուղղեց անոնց ըսելով.

«Շատ սիրելի մարզիկներ։ Հաձելի էր ձեզ ողջունել եկեղեցւոյ մէջ, ուր փառք տուիք Աստուծոյ որ ձեր առաքելութիւնը յաջող անցաւ Հայաստանի թէ ԱՄՆ-ի մէջ եւ դուք առողջ եւ անփորձանք վերադարձաք ձեր տուները։ Հաձելի է նաեւ ձեզ ողջունելը այս սրահին

մէջ։ Դուք մեր համայնքին ներկայութիւնը ապահովեցիք այդ երկիրներուն մէջ։ Ինչպէս ձեր ներկայութիւնը կարեւոր է համայնքին մէջ, եկեղեցւոյ մէջ, ՀՄԸՄի ընտանիքին մէջ, այնպէս ալ ձեր ներկայութիւնը կարեւոր է ձեր քոյրեղբայրներուն մօտ, որոնք այլ համայնքներու մէջ կը բնակին։ Եւ ինչո՞ւ է կարեւոր է այդ մեզի համար։ Որովհետեւ դուք կ'երթաք նոր լիցք եւ նոր արիւն բերելու, նոր կապեր ստեղծելու մարզիկներու եւ հայրենակիցներու հետ, որոնք ձեր կեանքը պիտի հարստացնեն։



Հետեւաբար, մեզի համար կարեւոր են նմանատիպ նախաձեռնութիւններու ձեր մասնակցութիւնը։ Դուք լաւ գիտէք որ մարմնամարզի մէջ մրցակցելէն աւելի կարեւոր է մասնակցիլը։ Եւ ձեր ամենամեծ յաղթանակը ձեր մեծաթիւ մասնակցութիւնն էր ՀամաՀՄԸՄական խաղերուն, որովհետեւ Աւստրալիոյ մարզիկները 20 առ հարիւրը կը կազմէին ընդհանուր թիւին»։

Ապա, Սրբազան հայրը բացատրեց կարեւորութիւնը մրցակցելուն ըսելով. «Մրցակցիլ կը նշանակէ առանց մէկուն վնաս հասցնելու, դուն քու

ուժիդ վստահելով առաջ երթալ, վստահելով քու շնորհքներուդ եւ կարողութիւններուդ։ Եթէ նոյնիսկ չկարենաս յառաջ երթալ, գէթ կը ձգտիս անոր։ Քրիստոս ալ մեզի կը պատգամէ ձգտիլ կատարելութեան, միշտ դէպի լաւագոյնը։



Երբ մարդ մէկ իրավիձակի մէջ ըլլայ կը ձանձրանայ եւ կը յոգնի։ Սկաուտութիւնը եւ մարզանքը ձեզի մասնակից դարձուցած են ՀՄԸՄի ընտանիքին, ձեր սրտին վրայ դրոշմած են այդ, որով ձեր ամբողջ կեանքին րնթացքին պատիւ պիտի զգաք որ պատկանած էք ՀՄԸՄի մեծ ընտանիքին։ Այդ նաեւ պատիւ է ձեր ծնողաց եւ ընտանիքի անդամներուն։ Հետեւաբար, քաջալերեցէ՛ք ձեր ընկերները մասնակցելու, որպէսզի մենք աւելի ուժեղ ըլլանք ՀՄԸՄի ընտանիքին մէջ, միեւնոյն ատեն դառնանք ուժեղ աւստրալացիներ։ Սակայն դուք ունիք ինքնութիւն, որուն համար պիտի պայքարիք միշտ։ Չպայքարող Հայը կէս Հայ է։ Իսկ

Քրիստոնէութեան ամենէն մեծ պատգամն է պայքարիլը չարին դէմ։ Հայութիւն եւ Քրիստոնէութիւն առանձին երեւոյթներ չեն, երկուքին լինելութեան իմաստը պայքարի մէջ է, հետեւաբար մի՛ ձանձրանաք պայքարելէ։


Թող Աստուած ձեզ զօրացնէ եւ օրհնէ ձեր պատասխանատուները, ընտանիքները եւ ՀՄԸՄի առաքելութեան բոլոր ծառայողները։ Թող ծաղկեալ մնայ ՀՄԸՄը» եզրակացուց Սրբազան հայրը։ Տիկնանց Միութեան շքեղ հիւրասիրութենէն ետք, բարձր տրամադրութեամբ աւարտեցաւ հաւաքը։

**Բշ., 25 Օգոստոս** – Սրբազան Հայրը ընդունեց Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը գլխաւորութեամբ Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ ատենապետ Shwp Արա Գոփուշեանի։ Քաղաքավարական այս այցին, Ծխական Խորհուրդին կ'ընկերակցէր Խորհուրդի պատւոյ ատենապետ Պրն Պետրոս Զօրլու։

Դշ., 27 Օգոստոս – Ամսուան առցանց դասա-խօսական երեկոյի դասախօսն էր երիտասարդ Տոքթոր Փրոֆէսըր Միքայէլ Մալխասեանը։ Նիւթ՝ Ժողովրդագրական Ներկայ Իրադրու թիւնը Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) Մէջ։



Ժողովրդագրութիւնը կ'ընդգրկէ ՀՀ-եան ժողովուրդին թիւը, կառոյցը, ծննդեան եւ մահուան տոկոսները, արտագաղթ եւ ներգաղթ, լեզուն, սովորութիւնները, հոգեբանութիւնը, եւայլն։ Փրոֆէսըրը մանրա-մասնութիւններով, վիձակագրական տախտակներու միջոցաւ զեկուցեց ոչ միայն Հայաստանի ժողովրդագրական տուեալներու մասին, այլ բազում երկիրներու, միշտ զուգահեռներ քաշելով, որը ա՛լ աւելի հետաքրքրական դարձուց նիւթը։ Մակայն իր գիտական բացատրութիւնները յաձախ ահազանգային էին եւ եթէ առաջքը չառնուի՝ երկիրը կրնայ դէմ յանդիման գալ լուրջ եւ անլուծելի



հարցերու։ Ճիշդ երկու ժամ տեւած դասախօսութիւնը բնաւ չձանձրացուց ակնդիրները, որոնցմէ շատեր, ուշ ժամու կապուեցան Փարոսի խմբագրութեան եւ յայտնեցին իրենց շնորհակալութիւնը եւ գնահատանքը։

Հանդիսավար Նշան Պասմաձեան, նախքան հարթակը Փրոֆէսըրին յանձնելը, զինք ներկայացուց հետեւեալ ձեւով.

Սիրելիներ,

Յանուն Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան հօր, եւ

թեմական խորհուրդին կ'ողջունեմ ձեզ բոլորդ, յատկապէս ողջոյն մեր սիրելի հիւր-դասախօս Պատմագէտ Փրոֆէսըր Միքայէլ Մալխասեանին։

Այս դասախօսութիւնը 43րդն է «Առաջնորդարանի առցանց լսարանական» շարքին։

Փրոֆէսըրը պիտի ներկայացնէ խիստ կարեւոր եւ այժմէական նիւթ մը, որմէ ետք հարցումներ եւ զրոյց, եւ եզրափակում։ Ամեն տեսակի մարտահրաւէրներու առջեւ կեցած է մեր հայրենիքը։ Պարոն Մալխասեան պիտի ներկայացնէ անոնց այն երեսը, որ պարզ հայորդիներս չենք տեսներ բայց անոնք մեզ հետ կը շնչեն։

\_\_\_\_ Ապա ան ներկայացուց դասախօսը. This product of the second sec

Միքայէլ Մալխասեան ծնած է 08.09.1990-ին

2007 - Ուսանող ԵՊՀ պատմութեան բաժին – կ'աւարտէ զայն յաջողութեամբ 2011-ին

2011- 2013 - ԵՊՀէն կը ստանայ պատմութեան Մագիստրոսի վկայական-մասթըրզ

2013- 2016 ԵՊՀ պատմութեան Դոկտոր

2010 – էն ի վեր «Քվանտ» վարժարանի (Quantum College) պատմութեան ուսուցիչ

2012- 2015 - ԵՊՀ ուսանողական գիտական ընկերութեան նախագահ

2014- 2016 - ԵՊՀ պատմութեան բաժինի հայոց պատմութեան ամբիոնի դասախօս

2016- 2018 - ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի հայոց պատմութեան ամբիոնի ասիստենտ

Այսինքն՝ Assistant Professor at the Chair of History of Armenia

2018-էն ի վեր - ԵՊՀ պատմութեան բաժնի հայոց պատմութեան ամբիոնի դոցենտ

Այսինքն՝ Associate Professor at the Chair of History of Armenia

2018 – էն ի վեր - «Քվանտ» վարժարանի պատմութեան ամբիոնի վարիչ

2019 – էն ի վեր - ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պատմութեան հանրապետական օլիմպիադայի մասնագիտական յանձնախումբի նախագահ


2019- 2020 - ԵՊՀ պատմութեան բաժինի դեկանի տեղակալ (Assistant Dean)

2021 – էն ի վեր - Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային պատմութեան և արտասահմանեան տարածաշրջանագիտութեան ամբիոնի դոցենտ։

Ունի Վերապատրաստողի մեծ փորձառութիւն։

Հրատարակած է 9 մենագրութիւն, 2 ուսումնական ձեռնարկ, շուրջ 50 յօդուած։ Մասնակցած է աւելի քան 60 գիտաժողովներու։

Պարգևատրուած է բազում անգամներ որպէս - «լաւագոյն ուսանող», ստացած է Սփիւռքի



Դասախօսութեան եութիւպեան յղումը կը գտնէք ստորեւ <a href="https://www.youtube.com/watch?v=zq8QEcNsS04&t=40s">https://www.youtube.com/watch?v=zq8QEcNsS04&t=40s</a>

նախարարութեան պատուոգիր, Եւրոպական Միութեան գրասենեակին կողմէ ստացած է «Քաղաքացիական կրթութեան լաւագոյն ուսուցիչ» պատուոգիր, Երեւանի Պետական Համալսրանի ոսկի մետալ՝ համալսարանի ուսանողական գիտական գործունէութեան մէջ մեծ ներդրումին համար, «Լաւագոյն գիտական աշխատանք» համահայկական մրցոյթի մրցանակ, «Հայագիտութիւն և հասարակական գիտութիւններ» առաջին կարգի մրցանակ եւ այլն։

Լեզուներ՝ Հայերէն , անգլերէն, ռուսերէն։



Ուրբ., 29 Օգոստոս – Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արժանապատիւ Քահանայ Հայրեր Տէր Աւետիս Համբարձումեանի եւ Տէր Աշոտ Աբրահամեանի, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի Ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեանի, այցելեց ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարան, ուր դիմաւորուեցաւ Տնօրէն Պարոն Մանուկ Տէմիր-ձեանի, ուսուցչական կազմի եւ

աշակերտութեան կողմէ։ Սրբազանը իր շրջայցի ընթացքին նաեւ այցելեց նորակառոյց գրադարանի շէնքը, որմէ ետք ծանօթացաւ դպրոցական առօրեային եւ հայեցի դաստիարակութեան ի նպաստ դրուած

ծրագիրներուն։ Աշակերտութիւնը գեղարուեստական կոկիկ յայտագրով մը ելոյթ ունեցաւ, մեծապէս տպաւորելով Սըրբազան հայրն ու ընկերակիցները։

Մրբազան հայրը բաշխեց իր օրհնութիւնը Տնօրէնութեան, հոգաբարձական կազմին, ուսուցիչներուն, աշակերտներուն եւ անոնց ծնողաց եւ քաջալերեց զանոնք միասնական ձիգով



իրականա-ցնելու ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի առաքելութիւնը յօգուտ Հայ դպրոցին, մեծցող սերունդին, համայնքին, Հայրենիքին եւ Եկեղեցւոյ։

Ուրբ., 29 Oqnumu – Ընկերակցութեամբ Տիկին Էլօ Մկրտիչեանի, Metropolitan Memorial Park-ի պատասխանատուները այցելեցին Սրբազան Հօր։ Անոնք քննարկեցին Հայկական բաժինին մէջ գերեզմանամասերու վերաբերեալ հարցեր։

Հինգշաբթի 30 Օգոստոս – Ընկերակցութեամբ Բրշ. Պօղոս Սրկ. Քէլէշեանի, Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ «Անառակ Որդին» թատրոնին, որ կազմակերպուած էր Սիտնիի Հայ Աւետարանական Եկեղեցիին կողմէ, հեղինակութեամբ Պրն Կարօ Սողոմոնեանի եւ բեմադրութեամբ Պրն Կարօ Խաչիկեանի։



Ձեռնարկին ներկայ էին Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, Քահանայ Հայրեր՝ Տէր Նորայր Փաթանեան, Տէր Պարթեւ Գարագաշեան, Տէր Աւետիս Հմաբարձումեան եւ Տէր Աշոտ Աբրահամեան, Թեմական Խորհուրդի ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեան, Թիմ Ճէյմս եւ Մաթ



Կիր., 31 Օգոստոս – Նախաձեռնութեամբ Ուիլուպիի քաղաքապետարանին եւ կազմակերպութեամբ Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնին (ՀՀԲԿ), գաղութային մաշտապով տեղի ունեցաւ "Հայաստանի Օր" փառատօնը Չացուուտի մայր շուկային մէջ, ժամը 11-18։ Պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ժամը 13-ին։

Այս փառատօնը սկիզբ առաւ 2024-ին, որուն նպատակն է համախմբել Միտնիի Աւստրալահայ համայնքը ցոյց տալու մեր յատուկ ժառանգութիւնը, մշակոյթը, արուեստն ու կերակուրը հանրութեան։



Քրոս, առաջինը՝ Ուիլուպիի, երկրորդը՝ Տէյվիտսընի նահանգային երեսփոխաններ, Թանիա Թէյլըր՝ Ուիլուպիի քաղաքապետուհի, փոխ քաղաքապետ Անձելօ Րոզոս, Րայտի քաղաքապետ Թրէնթըն Պրաուն, ինչպէս նաեւ քաղաքապետութեան տարբեր անդամներ։ Ներկայ էին նաեւ ներկայացուցիչները Մ. Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին, Հայ Դատի Յանձնախումբին, Համազգայինի Շրջանային Վարչութեան, Հայ Երէցներու Միութեան, Արմենիամետիայի եւ Փարոս ամսաթերթի խմբագրութեան։





Հայկական 14 բացօթեայ Կրպակներ նաեւ բացուած էին շուկային մէջ։ Այսպէս, ՀՀԲԿ-ի կրպակին մէջ կր հրամցուէր Արցախի Ճինկալով Հաց, հայկական սուրձ եւ ապարանջաներ, ՍՅ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի կրպակին մէջ՝ հայկական խորոված, Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեանը՝ Թան եւ Լեմոնի օշարակ, Համազգային Սիտնի Պարի Անսամբլին՝ հայկական թխուածքներ, ՀԲԸՄ Երիտասարդ Փրոֆէսիոնալներուն՝ հայկական ԻՉ, Նոր Սերունդ Մշակութային Միութեանը՝ Ֆալաֆէլ, Տիկ Լիզա Գոփուշեանի կրպակին մէջ՝ հայկական Գաթա, Նազուկ եւ այլ խմորեղէններ, Crafts By Maggie – 3D Matoss եւ TK Art կրպակներուն մէջ՝ հայկական ձեռագործներ եւ նուէրներ, Gold Art Jewellery՝ ոսկեղէններ եւ Zepure Sunglasses ակնոցներ։ Academy for Early Learners հայկական մանկամսուրը կը ծանօթացնէր իր տարած կրթական գործունէութիւնը։

Բազում հայեր եւ ոչ հայեր գնահատեցին ցուցադրուած ապրանքներն ու հրամցուած ուտեստեղէնները։ Խօսք առին Մաթ Քրոս, Թիմ Ճէյմս եւ Թանիա Թէյլըր, որոնք դրուատանքով արտայայտուեցան կազմակերպուած աշխատանքին մասին եւ իրենց զօրակցութիւնը արտայայտեցին Աւստրալահայ համայնքին, Հայաստանին, Արցախէն բռնագաղթած Արցախահայութեան եւ հայկական պահանջատիրութեան։





Եզրափակիչ խօսքը անգլերէնով արտասանեց Սրբազան Հայրը։ Խօսքը ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ.

Սիրելի<sup>՛</sup> բարեկամներ,

Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալութեան և Հայ համայնքի անունով ջերմօրէն կ'ողջունեմ ձեզ բոլորդ երկրորդ «Հայաստանի օր» փառատօնի միջոցառումին։

Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել մեր պատուարժան հիւրերուն. Դաշնային խորհրդարանի մէջ

Պեննելոնկի ներկայացուցիչ Պարոն Ժերոմ Լաքսալին, Պարոն Թիմ Ջեյմսին՝ նահանգային խորհրդարանի մէջ Ուիլուպիի ներկայացուցիչ Պարոն Մաթ Քրոսին՝ նահանգային խորհրդարանի մէջ Տէյվիտսընի ներկայացուցիչ, Ուիլուպիի Քաղաքապետուհի Թանյա Թէյլըրին, Րայտի Քաղաքապետ Թրենթըն Պրաունին, Ուիլուպիի փոխքաղաքապետ ԱնՃելօ Ռոզոսին - Ուիլուպիի քաղաքապետարանի



անդամներ Ռոպերթ Սամուէլին, Քրիստինա Տուտսին, Մայքըլ Չուանկին, քաղաքային խորհուրդի բոլոր անդամներուն, հոգեւոր հայրերուն, թեմական խորհուրդի ատենապետին։

Տիկնայք և պարոնայք,

Այսօր ուրախութեան, միասնութեան և հպարտութեան օր է, քանի որ մենք միասին պիտի տօնենք մեր հարուստ հայկական ժառանգութիւնը, մշակոյթը և աւանդոյթները, այստեղ՝ Ուիլուպիի սրտին մէջ։

ՀՀԲԿն միշտ կանգնած է լայն համայնքի կողքին՝ ծառայելով նուիրուածութեամբ և կարեկցանքով։ Այս փառատօնը ևս մէկ առիթ է յիշեցնելու մեր ժողովուրդի և բազմամշակութային համայնքներու ուժին մասին, ուժ, որուն հիմքերն են հաւատքը, ընտանիքը, մշակոյթը և ծառայութեան ոգին։

Որպէս ՀՀԲԿ-ի նախագահ, ես կ'ուզէի ընդգծել, որ այս միջոցառումը միացեալ հսկայական ջանքերու արդիւնք է. Ջանքեր, որոնք դրուած են հայկական մշակութային, կրթական հաստատութիւններու և առանձին խումբերու կողմէ՝ ներկայացնելով հայկական ժառանգութիւնը երաժշտութեան, պարի, ձեռագործի եւ այլ

աշխատանքներու միջոցով։ Այն գեղեցիկ կերպով կը ներկայացնէ Հայաստանը իր բոլոր գոյներով։

Մենք ոգևորուած ենք մեր բազմամշակութային շրջապատին կողմէ, մեզի ցուցաբերուած անկեղծ սիրով և աջակցութեամբ։ Մենք իսկապէս կը գնահատենք այսօրուան միջոցառումներուն մասնակցած իւրաքանչիւր համայնք։ Նման միջոցառումները հնարաւորութիւն կու տան մշակոյթն ու աւանդոյթները կիսելու աւստրալական լայն համայնքին հետ. այս փորձառութիւնները կառուցողական են եւ առիթ՝ փոխըմբռնումի և զիրար ընդունելու, որոնք մեր հասարակութիւնը աւելի ուժեղ կը դարձնեն։

Մեր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնենք Ուիլուպիի խորհուրդին և քաղաքապետ Թանյային՝ մեզի այս հարթակը առաջարկելուն համար, միասին տօնելու մեր մշակոյթն ու ժառանգութիւնը։

Յատկապէս շնորհակալ ենք կազմակերպիչներուն, ՀՀԲԿ-ի ընտանիքին, խնամակալութեան, տնօրէնուհի Զեփիւռ Մուրատեանին, բոլոր աշխատողներուն, մեր համայնքի ղեկավարներուն և բոլոր կամաւորներուն, որոնց անխոնջ ջանքերը հնարաւոր դարձուցին այս գեղեցիկ օրը։ Եւ վերջապէս, շնորհակալութիւն կը յայտնենք ձեզմէ իւրաքանչիւրին, սիրելի մասնակիցներուն և բարեկամներուն, այսօր այստեղ ըլլալուն և այս տօնակատարութեան մասնակցելուն համար։

Թող այս «Հայաստանի Օրը» մեզի համար ոգեշնչում ըլլայ շարունակելու համատեղ աշխատիլ մեր համայնքի բարօրութեան և մեր ապագայ սերունդներուն հայկական ինքնութեան պահպանման համար։ Կը մաղթեմ ձեզի յաջողութիւն։ Վայելեցէք ձեր այս օրը՝ բազմաթիւ զուարձալի միջոցառումներով և զուարձանքներով։

Այժմ աւարտենք միջոցառման պաշտօնական մասը աղօթքով, որմէ ետք կը խնդրենք մնալ և վայելել հիանալի հայկական երաժշտութիւնը, ուտելիքները և զուարձանքը։

Շնորհակալութիւն, և թող Աստուած օրհնէ ձեզ բոլորդ։

# Լուրեր Ծուխերէն

## Ուէնթուըրթվիլ – ՍԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի


Կիրակի, 10 Oqnumu - Կիրակնօրեայ Սուրբ Պատարագը մատուցեց Արժանապատիւ Տէր Պարթեւ Աւագ քահանայ Գարագաշեանը։ Աստուած զինք օրհնէ, երկար և առողջ կեանք պարգեւէ անոր։ Շնորհակալութիւն այսօր համայնքի անդամներու օրհնութեան համար։

Կիրակի, 17 Օգոստոս - Այսօր Սուրբ Երրորդութիւն Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծխական ընտանիքը աղօթքով տօնակատարեց Սուրբ Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնը։ Օրհնեալ օր մը, լի հաւատքով եւ երկիւղածութեամբ։ Թող Սուրբ Մարիամ Աստուածածնի բարեխօսութիւնը առաջնորդե և պահպանէ մեզ բոլորս։ Շնորհակալութիւն Արժանապատիւ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեանին մեզ առաջնորդելուն և աւանդական հերիսան օրհնելուն համար այս յատուկ առիթով։





Կիրակի, 24 Օգոստոս – Արժանապատիւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան նշեց Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին ութերորդ օրը։ Շնորհակալութիւն Տէր Աշոտ։ Թող Աստուած առատօրէն օրհնէ ձեզ։







## ՕՔԼԱՆՏ - ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ

Կիրակի 17 Օգոստոս - Կազմակերպութեամբ Նոր Զելանտայի Հայկական Միութեան, Օքլանտի Մէտօուուտ արուարձանի համայնքային տան մէջ համայնքի անդամները հաւաքուեցան տօնելու համար Սուրբ Աստուածածնայ տօնը, կատարելու բարեմաղթանքներ։ Տրուած ըլլալով որ նոյն օրը Հայաստանի թէ արտասահմանի շատ մը երկիրներու մէջ տեղի կ'ունենայ խաղողօրհնեքի արարողութիւն, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ

Զուարթնոց երգչախումբը, գլխաւորութեամբ Նշան Սարկաւագ Պասմաձեանի, կատարեց Անդաստան եւ խաղողօրհնէք։

Նախքան Անդաստան, Նշան Սարկաւագ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը նորոգ հանգուցեալ Մարկոս Սարկաւագ Իսկէնտէրեանի, որ իր մահկանացուն կնքեց Յունիս 2025-ին։ Աղօթք կարդաց դպրուհի Նարինէ Գրիգորեանը։

Նոյն երեկոյ, նոյն վայրին մէջ տեղի ունեցաւ Մ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ անդամական ընդհանուր ժողովը, որ իր աշխատանքները ամբողջացնելէ ետք կատարեց նոր ծխական խորհուրդի ընտրութիւն։ Ընտրուեցան հետեւեալ հաւատացեալ ազգայինները.

Տոքթ Զաւէն Փանոսեան – Ատենապետ Տիար Յակոբ Երլտըզեան - Խորհրդական Տիար Նամիր Պաթթանի - Խորհրդական Տիար Ատիս Երլտըզեան - Գանձապահ Նշան Սարկաւագ Պասմաձեան - Ատենադպիր

Ընդհանուր ժողովի դիւանը գրաւոր խընդրեց Գերաշնորհ Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Հօրմէն եւ Թեմական Խորհուրդէն վաւերացում նորընտիր ծխական խորհուրդին, որ կատարեցաւ Սրբազան Հօր պաշտօնական նամակով։

Ծխական Խորհուրդին առաջին աշխատանքը Գերաշնորհ Մրբազան Հօր եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան Նոր Զելանտա այցի կազմակերպութիւնն է Մեպտեմբեր ամսուն։





### ԵՐԱԺՇՏՈԻԹԵԱՆ, ՅԻՇՈՂՈԻԹԵԱՆ և ԻՄԱՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈԻԹԻԻՆ. ԽՈՐՀՐԴԱԾՈԻԹԻԻՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ Գրեց Սթիվըն Ռէյնպօ



Միրելի Ընթերցող,

Նոր Ջելանտայի Անկլիքան վարդապետ Իվիցա Կրէկուրէքի քաջալերանքով Պրն Սթիվըն Րէյնպօ, Նոր Ջելանտայի Մարդկային Իրաւանց Պաշտպանը, ինքն ալ հոգեւոր երաժշտութեան սիրահար մը նման Հայր Իվիցայի, կապ հաստատեց Նշան Մարկաւագի եւ Պատւոյ հիւպատոս Յակոբ Երլտրզեանին հետ, որոնք զինք, «յանձնեցին» Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի «խնամքին», երբ ան տակաւին Էջմիածին էր։ Սրբազանը չտեսնուած յարգանքով ընդունեց հիւրը եւ բարձրորակ խնամք ցուցաբերեց։ Մնացեալ մանրամասնութիւնները՝ Պրն Րէյնպոյի յօդուածին մէջ։

Խմբ.

Որպէս Նոր Զելանտայի Մարդու Իրաւունքներու գլխաւոր Յանձնակատար՝ վերջերս պատիւ ունեցայ մասնակցելու արհեստական բանականութեան և մարդու իրաւունքներու վերաբերեալ գիտաժողովի մը Ծոցի երկրներէն մէկուն մէջ։ Այդքան երկար ձանապարհորդութենէն ետք, որոշեցի գիտաժողովի աւարտէն յետոյ, կարձ, անձնական ուղևորութիւն կատարել մօտակայքը։

Հոգեւոր երաժշտութեան հանդէպ ունեցած հրապուրանքէն մղուած՝ ընտրեցի Հայաստանը։ Ես պատկերացում անգամ չունէի, թէ այդ ընտրութիւնս վրաս որքան խոր ազդեցութիւն պիտի ունենար։ Յիսուն տարիներու Ճամբորդութեանցս ընթացքին երբեք չեմ այցելած այնպիսի վայր, ուր պատմութիւնը, մշակոյթը և երաժշտութւնը այդքան խոր միահիւսուած են, և ուր երաժշտութիւնը այդքան ներկայութիւն է առօրեայ կեանքին մէջ։

#### Յիշողութեան Ուժը

Առաջին օրը զիս դիմաւորեց Հայաստան ապրող Նոր Ջելանտացի Լէն Ուիքսը իր Հայ կնոջ՝ Արմինէին հետ։ Անոնք զիս տարին Հայոց Ցեղասպանութեան Յուշահամալիր։ Խորապէս շատ յուզիչ երեւոյթներու շարքին մէջ առանձնացաւ մէկ երեւոյթ՝ Հիթլերի սարսափելի մէջբերումը. «Ո՞վ, ի վերջոյ, կը յիշէ Հայերը»։ Քաղած բազմաթիւ դասերէս մէկն էր այն փաստը, որ պատերազմը քօղարկեց քսաներորդ դարու ամենասարսափելի վայրագութիւնները։

#### Հոգեւոր Soundtrack-ը

Յաջորդ օրերուն, տարօրինակօրէն, ես բարեբախտութիւնը ունեցայ շրջելու Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի

հետ, Առաջնորդը Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին։ Մենք այցելեցինք Գառնի, ուր հանդիպեցանք խումբ մը տարբեր երկիրներէ ժամանած երիտասարդ կանանց, որոնք կ'երգէին տաձարին մէջ։ Այդ խորապէս յուզիչ պահ էր, ապշեցուցիչ, բնական միջավայրի մէջ։

